



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

22.11.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/76

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն
Բողոք բերող՝ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ

Մասնակցությամբ՝
Պատվիրատուի ներկայացուցիչներ՝ Մ. Համբարձումյանի, Հ. Սարգսյանի
«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Սողոյանի, Գ. Խաչվանքյանի,
Բ. Թադևոսյանի, Գ. Գաբրիելյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34» ծածկագրով գնանշման հարցում, «դատաբժշկական
գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի վերազինման նպատակով՝ «գազային
քրոմատոգրաֆ-մասսպեկտոմետրի» ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ
քննող անձ)՝ քննության առնելով «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև
Ընկերություն) կողմից 24.10.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից
փաստաթղթերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել ՀՀ առողջապահության նախարարությանը ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 24.10.2019թ.-ն և նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, իսկ 30.10.2019թ.-ին, 06.11.2019թ.-ին և 20.11.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 20.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.11.2019թ.-ին:

2. «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Ս.թ. հոկտեմբերի 18-ին Armeps համակարգի միջոցով Առողջապահության նախարարության (այսուհետև Պարվիրատու) կողմից հրապարակվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34» ծածկագրով գնանշման հարցում:

Ուսումնասիրելով հրավերը, մասնավորապես՝ տեխնիկական բնութագիրը, եկանք այն եզրահանգման, որ առկա են պարզաբանման ենթակա կետեր, որոնք օրենքով սահմանված ժամկետում՝ 18/10/2019թ.-ին, ուղարկվել է Պարվիրատուին Armeps համակարգի միջոցով:

Ըստ պարզաբանման բովանդակության՝ «խնդրել ենք պարզաբանել ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34 ծածկագրով մրցույթի գնման առարկա հանդիսացող «Գազի քրոմատոգրի մաս սպեկտրաչափի համալրող մասերի և ծրագրերի հավաքածու»-ի տեխնիկական բնութագիրը, ըստ որի պահանջվում է սարքը կիրառել «Սինթետիկ, կիսասինթետիկ, բուսական ծագման թմրանյութերի, հոգեներգործուն նյութերի որոշման համար», նշվածից հանգում ենք հետևության, որ սարքը կիրառվելու է նշյալ նյութերի որոշման նպատակով, ինչը չի պահանջում բազմակի մեթոդներ, որի համար անհրաժեշտ չէ

աշտարակի և ֆիլամենտի բազմակի փոխարինում, քանի որ օգտագործվելու է ընդամենը մեկ մեթոդ: Բնութագրում նշված «Վակուումային շյուզ, իոնային աղբյուրի քարտրիջի արտահանման հնարավորությամբ, ինչպես նաև քրոմոտոգրաֆիկ աշտարակի փոփոխման հնարավորությամբ առանց վակուում անջատելու» պահանջը էական լինել չի կարող, այն բնորոշ է միայն մեկ արտադրող ընկերությանը, որը արհեստական խոչընդոտ է ստեղծում մրցույթի մասնակիցների համար, սահմանափակելով՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքը: Հաշվի առնելով, որ տեխնիկական բնութագրում առկա են բազմաթիվ այլ պահանջներ՝ բնորոշ միայն մեկ արտադրող ընկերությանը, առաջարկել ենք վերանայել գնման առարկայի տեխնիկական բնութագիրը, վերացնելով սահմանափակումները և բավարարել օրենքով սահմանված մեկից ավելի հնարավոր մասնակիցների և արտադրողների մասնակցությունը»:

Պատվիրատուի 21/10/2019թիվ 2 որոշմամբ հրապարակված հրավերի պարզաբանման հայտարարության գրված էր, որ «նշված բնութագրերը առնվազն համապատասխանում են Shimadzu ընկերության NEXIS QP 2020NX, և Thermo Fisher Scientific ընկերության ISQ 7000 մոդելներին և այլ արտադրողների մոդելներին»:

Սակայն, այդ պնդումը չի համապատասխանում իրականությանը և չի համընկնում հրավերով պահանջվող տեխնիկական չափորոշիչներին ստորև նշված կետերով:

Հ/Հ	Չափորոշիչ	Հրավերով պահանջվող տեխնիկական բնութագիր	Shimadzu ընկերության NEXIS QP 2020NX մոդելի տեխնիկական բնութագիր	Մեկնաբանություն
1	Վակուումային շյուզ, իոնային աղբյուրի քարտրիջի արտահանման հնարավորությամբ, ինչպես նաև քրոմոտոգրաֆիկ աշտարակի փոփոխման հնարավորությամբ առանց վակուում անջատելու	Առկա է	Բացակայում է	Վակուումային շյուզ առկա չէ
2	Մասսաների ինտերվալը	ոչ նեղ քան 1.2-1100 Ա.Մ.Մ.	1.5-1090 Ա.Մ.Մ.	Չի համապատասխանում, քանի որ 1.2-1.5 և 1090-1100 զանգվածները հնարավոր չէ որոշել
3	Ջեռոցի ջերմաստիճանի աճի առավելագույն արժեքը	+125°C/րոպե	Առավելագույնը +120 °C/րոպե	Չի համապատասխանում, քանի որ 120-ից 125 տիրույթը

				ներառված չէ
4	Մակերեսի վերարտադրողականությունը	<0,5% RSD	<1% RSD	Չի համապատասխանում
5	Հայտնաբերման սահմանը	Ոչ ավել քան 5 ֆեմտոգրամ օկտաֆտորինաֆտալեն Ոչ քիչ քան 2000:1	1 պիկոգրամ օկտաֆտորինաֆտալեն Ոչ քիչ քան 2000:1	Չի համապատասխանում, քանի որ 1 պիկոգրամը հավասար է 1000 ֆեմտոգրամի, իսկ պահանջվում է ոչ ավել քան 5 ֆեմտոգրամ
6	Երեք հեշտ փոփոխվող դետեկտորի տեղադրելու հնարավորություն	Առկա է	բացակայում է	Հեշտ փոփոխվող դետեկտորներ առկա չեն

Նշենք, որ մեր կողմից ուսումնասիրվելուց հետո բնութագիրը ուղարկվել է Agilent ընկերության մասնագետին, որպես «այլ արտադրող», ով նույնպես հաստատել է, որ տվյալ տեխնիկական բնութագիրը հասանելի է միայն մեկ՝ Thermo Fisher Scientific արտադրող ընկերությանը: Ավելին, եթե մատնանշվեր «այլ արտադրողների մոդելները» մենք նույն մանրամասնությամբ կվերլուծեինք այդ մոդելների տեխնիկական բնութագրերը ևս:

Անհասկանալին այն է, թե ինչու Պարվիրատուի կողմից նախքան մրցույթի հրավերի հրապարակումը չի կատարվել շուկայի ուսումնասիրություն, չի դիմվել ՀՀ-ում առկա արտադրող ընկերությունների՝ Agilent և Shimadzu պաշտոնական ներկայացուցչություններին, որոնք ունեն նմանատիպ սարքերի մատակարարման փորձ:

Տեղեկացնենք, որ Agilent-ի պաշտոնական ներկայացուցիչը ի դեմս մեր ընկերության ունի տեխնիկական սպասարկման կենտրոն, Agilent-ում վերապատրաստված, սերտիֆիկացված մասնագետներ, ավելի քան հինգ տարվա փորձ, գնման առարկա հնադիսացող «Գազի քրոմատագիր մասս սպեկտրաչափ»-ի առկայություն պահեստում, ինչպես նաև առնվազն երեք տարվա սպասարկման համար անհրաժեշտ պահեստամասեր:

Մի քանի արտադրողների համար չի միջինացվել տեխնիկական բնութագրի պահանջները, այլ հրապարակվել է «փակված» տեխնիկական բնութագիր մեկ ընկերության համար, որը նույնիսկ չունի պաշտոնական ներկայացուցչություն ՀՀ-ում և նշվել է, որ «Հայտով ներկայացրած սարքավորման չափանիշները կգնահատվեն բավարար միայն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի չափանիշներին համապատասխանելու

դեպքում», սրանով իսկ սահմանափակելով այլ ընկերությունների հնարավոր մասնակցությունը:

Իսկ մասնակցության դեպքում էլ գնահատող հանձնաժողովի կողմից կարճաժամկետի տեխնիկական բնութագրի անհամապատասխանություն, դիմելով լիազոր մարմնին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Մինչդեռ բնութագրով նշված թմրանյութերի փորձաքննության խնդիրը հնարավոր է լուծել ցանկացած արտադրողի սարքով՝ լինի դա Thermo, Shimadzu, թե Agilent:

Պատվիրատուի պնդումը առ այն, որ «առնվազն երկու և այլ արտադրող ընկերություն համապատասխանում է հրավերով սահմանված տեխնիկական պահանջներին» չի համապատասխանում իրականությանը:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը, հայտնում ենք, որ առկա է անհամապատասխանություն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի և օրենքի պահանջի միջև, ըստ ՀՀ Կառավարության 02 մայիսի 2019 թվականի N 526-Ն որոշման 22-րդ կետի՝ այն է, որ «Գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հարկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ»:

Հետևաբար Պատվիրատուի այդ պնդումը դառնում է անհիմն և իրականությանը չհամապատասխանող, իսկ տեխնիկական բնութագիրը ենթակա փոփոխման:

Ամփոփելով վերոգրյալը, խնդրում ենք պարտավորեցնել Պատվիրատուին չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

Ինչպես նաև նույն օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված

հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել ՀՀ առողջապահության նախարարությանը ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

Ներկայացված բողոքի լրացումներով Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Նախորդ նիստում Պարվիրատուն մատնանշեց որպես «այլ արտադրող» GIBNIK ընկերության համապատասխանության մասին:

Մեր կողմից մանրամասն ուսումնասիրելուց հետո հաստատում ենք, որ նշված GIBNIK ընկերությունը նույնպես չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրին: Կից ներկայացնում ենք GIBNIK ընկերության տեխնիկական բնութագիրը:

Տվյալ ապացույցով ևս մեկ անգամ փաստում ենք, որ Պարվիրատուն հիմք է ընդունել կոնկրետ ֆիրմային պատկանող մոդելի տվյալներ:

Ուստի, հիմք ընդունելով գործում առկա փաստական հանգամանքները, համադրելով միմյաց հետ, պնդում ենք, որ սույն հրավերի տեխնիկական բնութագիրը կազմված է «Գնումների մասին» ՀՀ օրենքին (այսուհետ՝ Օրենք) անհամապատասխան:

Հաշվի առնելով, որ Պարվիրատուն հիմք է ընդունել կոնկրետ ֆիրմային պատկանող մոդելի տվյալներ, ուստի խնդրում ենք հայտարարած ընթացակարգը համարել չկայացած:»:

« 1. Մեր ընկերության կողմից հարցում է արվել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր GIBNIK ընկերության պաշտոնական կայքում նշված էլեկտրոնային հասցեներին (marketing@gibnik.com, salles@gibnik.com):

Ի պատասխան ստացել ենք ընկերության փոխնախագահ դոկտոր Դավիդ Ալոնսոյի կողմից նամակ առ այն, որ ընկերության կողմից արտադրվող ապրանքատեսակների և արտադրանքների մասին ամբողջ տեղեկատվությունը և մասնավորապես այդ սարքին վերաբերող մանրամասները տեղադրված է իրենց պաշտոնական կայքում, որի հղումը նշված է:

Հաշվի առնելով, որ Ձեր կողմից էլ կատարված հարցման պատասխանում նշված չէ որևէ տեխնիկական բնութագիր, ուստի հիմք է հանդիսանում պաշտոնական կայքում տեղադրված տեխնիկական բնութագիրը:

2. Նախորդ նիստում ներկայացրել էինք GIBNIK ընկերության «GC-MS Q2» տեխնիկական բնութագիրը և առձեռն փոխանցել Ձեզ, որի հիման վրա իրականացվել է գնահատումը, ներկայացնում ենք ստորև հղումներով, աղյուսակի տեսքով:

Հ/Հ	Չափորոշիչ	Հրավերով պահանջվող տեխնիկական բնութագիր		Shimadzu ընկերության NEXIS QP 2020NX մոդելի տեխնիկական բնութագիր	GIBNIK ընկերության KONIK GC-MS Q2 մոդելի տեխնիկական բնութագիր
1	Վակուումային շյուզ, իոնային աղբյուրի քարտիջի արտահանման հնարավորությամբ, ինչպես նաև քրոմոտոգրաֆիկ աշտարակի փոփոխման հնարավորությամբ առանց վակուում անջատելու	Առկա է		Չի համապատասխանում Բացակայում է Վակուումային շյուզ առկա չէ	Չի համապատասխանում Բացակայում է Վակուումային շյուզը “The pumping down time is extremely low, less than 5 minutes from atmospheric to operational vacuum” www.gibnik.com/products/#GC-MS
2	Մասսաների ինտերվալը	ոչ նեղ քան 1.2-1100 Ա.Մ.Մ.		Չի համապատասխանում 1.5-1090 Ա.Մ.Մ 1.2-1.5 և 1090-1100 զանգվածները հնարավոր չէ որոշել.	Համապատասխանում է 1.0-1200 Ա.Մ.Մ. www.gibnik.com/products/#GC-MS
3	Ջեռոցի ջերմաստիճանի աճի առավելագույն արժեքը	+125°C/րոպե		Չի համապատասխանում Առավելագույնը +120 °C/րոպե 120-ից 125 տիրույթը ներառված չէ	Համապատասխանում է +130°C/րոպե www.gibnik.com/products/#GC-MS
4	Մակերեսի վերարտադրողականությունը	<0,5% RSD		Չի համապատասխանում <1% RSD	Պաշտոնական Տեղեկությունը բացակայում է www.gibnik.com/products/#GC-MS
5	Հայտնաբերման սահմանը	5.1	Ոչ ավել քան 5 ֆեմտոգրամ օկտաֆտորին աֆտալեն	Չի համապատասխանում 1 պիկոգրամ Օկտաֆտորինաֆտալեն իսկ պահանջվում է ոչ ավել քան 5 ֆեմտոգրամ քանի որ 1 պիկոգրամը հավասար է 1000 ֆեմտոգրամի	Չի համապատասխանում 10 ֆեմտոգրամ (10>5) www.gibnik.com/products/#GC-MS

		5.2	Ոչ քիչ քան 2000:1	Համապատասխանում է Ոչ քիչ քան 2000:1	Չի համապատասխանում (1500<2000) Ոչ ավել քան 1500:1 www.gibnik.com/products/ #GC-MS
6	Երեք հեշտ փոփոխվող դետեկտորի տեղադրելու հնարավորություն		Առկա է	Չի համապատասխանում Բացակայում է Հեշտ փոփոխվող դետեկտորներ առկա չեն	Համապատասխանում է Առկա է www.gibnik.com/products/ #GC-MS

Ինչպես երևում է աղյուսակից, գնահատման արդյունքում GIBNIK ընկերության փվյալ սարքը չի համապատասխանում Պատվիրատուի կողմից հայտարարված ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34 ծածկագրով հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրին (աղյուսակի 1, 5.1 5.2 կետերին, իսկ 4-րդ կետով իրականացնել գնահատումն անհնար է, քանի որ բացակայում է որևէ տեղեկություն:

3. Կից ներկայացնում ենք մասնագիտական ուսումնասիրության համար հիմք հանդիսացող հղումները և GIBNIK ընկերության կայքից արտադրված էջի բովանդակությունը (screeshot-ի տեսքով):

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով գործում առկա գրավոր և բանավոր բոլոր նիստերում ներկայացված փաստական հանգամանքները, պնդում ենք, որ GIBNIK ընկերության (որը ներկայացրել է մասնակցության հայտ), ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից նշված SHIMADZU ընկերության (որը մասնակցության հայտ չի էլ ներկայացրել) ապրանքները չեն համապատասխանում հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրին, դրանով ևս մեկ անգամ փաստելով, որ հայտարարված տեխնիկական բնութագիրը կազմված է միայն մեկ արտադրողի՝ Thermo Fisher Scientific ընկերության համար:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ և 13-րդ հոդվածի 2-րդ մասերը, խնդրում ենք ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34 ծածկագրով հայտարարած ընթացակարգը համարել չկայացած և սույն ապրանքի գնման ընթացակարգը վերահայտարարելու դեպքում վերանայել փվյալ տեխնիկական բնութագիրը՝ համապատասխանեցնելով օրենքի պահանջներին:»:

3. ՀՀ առողջապահության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 24.10.2019թ.-ի գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 24.10.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 29.10.2019թ.-ին թիվ Մ-48462-2019 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Առողջապահության նախարարությունը ներկայացնում է իր դիրքորոշումը՝ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի բողոքի վերաբերյալ:

Բողոքաբերի այն պնդման վերաբերյալ, որ վերոնշյալ ընթացակարգի գնման առարկայի տեխնիկական բնութագրով պահանջվող չափանիշները համապատասխանում են միայն մեկ արտադրողի արտադրած սարքավորմանը, չի համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, հայտարարված գնման ընթացակարգի արդյունքում հայտերի բացման օրը՝ 2019 թվականի հոկտեմբերի 25-ին, հայտ են ներկայացրել թվով 2 կազմակերպություններ («Իմմունոֆարմ» և «Պրոֆտեստ» ՍՊԸ-ները): Բացի այդ, գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած վերոգրյալ կազմակերպությունների կողմից աշխատանքային կարգով ստացվել են գրություններ (կցվում են)՝ իրենց կողմից առաջարկվող ապրանքների արտադրողների վերաբերյալ, ըստ որոնց արտադրողները տարբերվում են:

«Agilent» ընկերության մասնագետի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի վերաբերյալ կարծիքը չի կարող լինել օբյեկտիվ, քանի որ «Agilent» ընկերությունը հանդիսանում է մրցակից արտադրող ընկերություն: Բացի այդ չի կարող լինել նաև հիմնավոր, քանի որ բողոքում բացակայում են անհամապատասխանության վերաբերյալ ապացույցները:

Միաժամանակ, հայտնում եմ, որ Առողջապահության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել «գազի քրոմատոգրի մաս սպեկտրաչափի համալրող մասերի և ծրագրերի հավաքածու» Առողջապահության նախարարության «Դատարժեղական գիտազործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կենտրոն) վերազինման նպատակով: Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում

նկատվում է թմրանյութերի և հոգեմեկտ նյութերի, ինչպես նաև բենզինային խառնուրդների օգտագործման աճ՝ առողջապահական տեսանկյունից սպառնալիք հանդիսանալով ազգաբնակչությանը: Հաշվի առնելով, որ Կենտրոնի հիմնական գործունեության ուղղություններից մեկը հանդիսանում է դադարաժշկական թունաբանությունը և ելնելով գազային քրոմատոգրաֆի մաս սպեկտրաչափի բարձր ընտրողականության, նյութափոխանակության ակտիվ արգասիքների հայտնաբերման և մահվան չպարզված դեպքերի արդյունավետ ախտորոշման հնարավորությունից՝ անհրաժեշտ է ընդգծել, որ Կենտրոնի վերագինումը գազային քրոմատոգրաֆի (մաս սպեկտրաչափի հետ համակցված) հնարավորություն կտա՝

Կենտրոնում իրականացվող վերլուծական և հետազոտական աշխատանքի արդյունավետության կտրուկ բարձրացման՝ դիակներից և կենդանի անձանցից ստացված կենսանմուշներում բնական և սինթետիկ թմրամիջոցների, հոգեմեկտ նյութերի չնչին քանակների հայտնաբերման, օգտագործված թմրամիջոցների նույնիսկ չնչին չափաքանակի հստակ քանակական գնահատման, չափաքանակով պայմանավորված կենսական կարևոր օրգաններում և հյուսվածքներում առաջացած ձևաբանական և ախտաբանական փոփոխությունների հետազոտական և վերլուծական աշխատանքների իրականացման, թմրամիջոցների օգտագործմամբ ուղղակիորեն և անուղղակիորեն պայմանավորված մահացության գնահատման, հանրային առողջության համար վրանգավոր (ոհսկային) նոր թմրամիջոցների վաղ հայտնաբերման, թմրամոլության բուժման նոր, արդյունավետ մեթոդաբանության մշակման, թմրամիջոցների և թմրամոլության վերաբերյալ տվյալների հավաքագրման, մոնիտորինգի և հետազոտվելույթյան, գիտական-տեղեկատվական պատշաճ հագեցվածության ապահովման,

«ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ հատուկ քննչական ծառայության, ՀՀ ոստիկանության, Առողջապահության նախարարության, ՀՀ ՊԵԿ-ի հետ համագործակցության արդյունավետության բարձրացման՝ նպաստելով թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված անհրաժեշտ լրացուցիչ միջոցառումների մշակմանը, թմրամոլության կանխարգելման ազգային ծրագրի արդյունավետության բարձրացմանը:

Հաշվի առնելով Կենտրոնի դադարաժշկական թունաբանության բաժնի «գազային քրոմատոգրաֆի մաս սպեկտրաչափ» սարքավորումով վերագինման խիստ կարևոր անհրաժեշտությունը՝ Առողջապահության նախարարությունը 2019 թվականին կազմակերպել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34» ծածկագրով գնման ընթացակարգը և

նախատեսվում է մինչև տարեվերջ Առողջապահության նախարարության ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի ազատ միջոցների հաշվին ձեռք բերել նշված սարքավորումը: Արդյունքում, Կենտրոնի կողմից կապահովվի լիարժեք և պատշաճ ծառայությունների մատուցումը:»:

4. ԳԲՔԱ-LO-2019/76 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ առողջապահության նախարարության կողմից «դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի վերազինման նպատակով՝ «գազային քրոմատոգրաֆ-մասսպեկտոմետրի» ձեռքբերման նպատակով 18.10.2019թ. հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի բացման նիստի օր է սահմանվել 25.11.2019թ.-ին:

Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

«Գազի քրոմատոգրի մաս սպեկտրաչափի համալրող մասերի և ծրագրերի հավաքածու՝ Մասս սպեկտրաչափ կվադրոպոլային անալիզատորով, իոնիզացիայի տիպը, էլեկտրոններով (էլեկտրոնային հարված), մասս սպեկտրերի գրանցման տեսակները՝ ամբողջական ժամանակային ինտերվալում, full scan, ընտրված իոններով, sim, ընտրողական full scan/sim: Իոնային աղբյուրը՝ էլեկտրոնային իոնիզացիաի ջերմաստիճանը 50-350 °c, վակուումային պոմպը՝ մեխանիկական պլաստիկ-ռոտորային պոմպ 3.2-3.4 մ3/ժամ կամ համարժեք, մասսաների ստաբիլությունը՝ շեղումը ոչ ավել քան 0,1 ա.մ.մ./48 ժ: Մասսաների ինտերվալը՝ ոչ նեղ քան 1.2-1100 ա.մ.մ., բաժանելու հնարավորությունը՝ $\delta m \geq 0,4$ ա.մ.մ., սկանավորման արագությունը, ոչ պակաս 20000 ա.մ.մ./վ: Ինտերվալի սկանավորման արագությունը 125 ա.մ.մ.ինտերվալում, full scan ռեժիմում ոչ քիչ 97 սկան/վ: Հայտնաբերման սահմանը՝ ոչ ավել քան 5 ֆեմտոգրամ օկտաֆտորնաֆտալեն: Ազդակ/աղմուկ հարաբերությունը՝ ոչ քիչ քան 2000:1, ոչ ավել 1մկլ և ոչ ավել 1պիկոգրամ/միկրոլիտր խտությամբ օկտաֆտորնաֆտալեն: Վակուումային շյուգ, իոնային աղբյուրի քարտիջի արտահանման հնարավորությամբ, ինչպես նաև քրոմատոգրաֆիկ աշտարակի փոփոխման հնարավորությամբ առանց վակուում անջատելու: Գազային

քրոմատագիր՝ երեք հեշտ փոփոխվող դետեկտորի տեղադրելու հնարավորություն, չորս դետեկտորի ազդանշանների գրանցման հնարավորություն, էլեկտրոնային պնեմատիկ կառավարում (էպի) բոլոր խորշիկների և դետեկտորների համար, նմուշի հետ հավող բոլոր մակերեսների իներտություն ամբողջ հոսքագծի երկայնքով, 4-ից ավելի էպի-ի տեղադրելու հնարավորություն և ոչ քիչ 14 ավիքի կառավարում, ճնշման սահմանված արժեք – ± 0.001 psi, բոլոր ճնշման տիրույթներով ներառված 0-150: Ներարկման համակարգը՝ մոդուլային, (split/splitless), գազ կրիչի բաժանիչով, հոսքի բաժանման գործակիցը ոչ պակաս քան 9999,9/1: Ճնշման տիրույթը՝ 0–970 կպա: Ընդհանուր հոսքերի տիրույթը ոչ նեղ քան 5 ից 1200մլ/րոպե, սանդղակավորումը 0,1մլ/րոպե: Ներարկման համակարգերի քամակը ոչ քիչ քան 2 համակարգ: Նախատեսված բոլոր մազանոթային աշտարակների համար (50-ից 530 մկմ ներքին): Ներարկման համակարգի մաքսիմալ ջերմաստիճանը ոչ քիչ քան 400°C: Աշտարակի թերմոստատը՝ աշխատանքային ջերմաստիճանը +5-ից +450 °c, In2 սառեցումով +100 ից 450 °c, co2 սառեցումով +50 ից 450 °c: Պահման ժամանակի վերարտադրողականություն ոչ ավել քան - 0.008% կամ 0.0008 րոպե: Մակերեսի վերարտադրողականություն - < 0,5%rsd: Ջերմաստիճանի կարգավորելու ճշտությունը ոչ ավել քան-0.1 °c: Աջակցում է ոչ քիչ քան 25 տաքացման ծրագիր, ոչ քիչ քան 26 իզոթերմիկ տիրույթներում: Թույլատրելի են բացասական արժեքներ: Բացասական նշանակությունները թույլատրելի են: Ջեռոցի ջերմաստիճանի աճի առավելագույն առժեքը +125 °c/րոպե: Առավելագույն անդադարտ աշխատանքի ժամանակը 999.99 րոպե (կամ 16.7 ժամ): Ջեռոցի սառեցման ժամանակը – ոչ քիչ քան 4 րոպեում 450°C-ից մինչև 50°C սառելու համար: Ներկառուցված հեղուկ բյուրեղային էկրան կառվարման հնարավորությամբ: Ավտոմատացված ներարկման համակարգ: Ներարկչի ծավալը ոչ ավել քան 10մլ, 5 և 0.5մլ հնարավորությամբ: Մաքսիմալ ներարկման ծավալը ոչ քիչ քան 5մլ: Մինիմալ ներարկման ծավալը ոչ ավել քան 0.01մլ: Մնացորդային քանակը(carryover) ոչ ավել քան 0.001 %: Սանդղակավորումը ոչ ավել քան 0.01մլ: Նմուշների սրվակները ոչ քիչ քան 8 հատ 2մլ: Ամբողջական ծրագրային կառավարմամբ: Ծրագրային կառավարումը համակարգը պետք է կառավարվի մեկ ծրագրային փաթեթով: Ծրագիրը պետք է համապատասխանի 21 cfr part 11 պահանջներին, օգտատերերի կառվարման համակարգ: Ավտոմատացված տվյալների դուրս բերման հնարավորություն: Մասս սպեկտրերի գրադարան պարունակությունը ոչ քիչ քան 300 000 սպեկտոր: Մասս սպեկտրների գրադարան սպեցիֆիկ թունաբանական հետազոտությունների համար ոչ քիչ քան 26000 սպեկտոր: Մասս սպեկտրների դեկոնվոյուցիայի սպեցիֆիկ ծրագրի առկայություն: Ոչ քիչ քան core i5 կամ համարժեք համակարգչի առկայություն: Սարքի կարգաբերումը և

թողարկումը պետք է կատարվի արտադրողի սերտիֆիկացված մասնագետի կողմից: Սինթետիկ, կիսասինթետիկ, բուսական ծագման թմրանյութերի, հոգեներգործուն նյութերի որոշման մեթոդների ներդրում ներառյալ 30մx0.25մմ ոչ բևեռային պոլիսիլոբսանային աշտարակի տեղադրումը: Մատակարարը տրամադրում է անհրաժեշտ հելիում գազը ոչ պակաս քան 50լ մետաղական բալոնով 200 բար ճնշումով, 99,9999% մաքրությամբ: Երաշխիքային ժամկետ ոչ պակաս քան 1 տարի սարքի տեղադրման, կարգաբերման և թողարկման պահից:

www.gnumner.am կայքում հրապարակված է ՀՀ առողջապահության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ տրամադրված պարզաբանումների մասին հրապարակվել է թվով 1 հայտարարություն (այսուհետ նաև՝ Հայտարարություն):

Հայտարարությունում առկա տեղեկատվության համաձայն՝ Պատվիրատուն իր պատասխանում նշել է, որ ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34 ծածկագրով մրցույթի 1-ին չափաբաժնի՝ «Գազի քրոմատոգրի մաս սպեկտրաչափի համալրող մասերի և ծրագրերի հավաքածու» չափորոշիչները համապատասխանում են առնվազն 2 արտադրողների՝ SHIMADZU ընկերության GCMS QP2020NX և Thermo Fisher Scientific ընկերության ISQ 7000 Single quadrupole ժամանակակից սարքավորումների բնութագրերին:

Armepps.am/PPCM/ կայքում առկա տվյալների համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել 2 կազմակերպություններ:

«Իմնունֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրության համաձայն՝ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում մասնակիցը ներկայացրել է Thermo Scientific ընկերության արտադրության GCMS ISQ7000 մոդելի գինը:

«Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրության համաձայն՝ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում մասնակիցը ներկայացրել է GIBNIK ընկերության կողմից արտադրված սարքավորում:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 24.10.2019թ. ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա ամբողջությամբ բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

«ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«ՎՎ առողջապահության նախարարության կողմից «դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «գազային քրոմատոգրամա-մասսպեկտոմետրի» ձեռքբերման նպատակով 18.10.2019թ. հայտարարված «ՎՎ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

«Գազի քրոմատոգրի մաս սպեկտրաչափի համալրող մասերի և ծրագրերի հավաքածու՝ Մասս սպեկտրաչափ կվադրոպոլային անալիզատորով, իոնիզացիայի տիպը, էլեկտրոններով (էլեկտրոնային հարված), մասս սպեկտրերի գրանցման տեսակները՝ ամբողջական ժամանակային ինտերվալում, full scan, ընտրված իոններով, sim, ընտրողական full scan/sim: Իոնային աղբյուրը՝ էլեկտրոնային իոնիզացիայի ջերմաստիճանը 50-350 °c, վակուումային պոմպը՝ մեխանիկական պլաստիկ-ռոտորային պոմպ 3.2-3.4 մ3/ժամ կամ համարժեք, մասսաների ստաբիլությունը՝ շեղումը ոչ ավել քան 0,1 ա.մ.մ./48 ժ: Մասսաների ինտերվալը՝ ոչ նեղ քան 1.2-1100 ա.մ.մ., բաժանելու հնարավորությունը՝ $\delta m \geq 0,4$ ա.մ.մ., սկանավորման արագությունը, ոչ պակաս 20000 ա.մ.մ./վ: Ինտերվալի սկանավորման արագությունը 125 ա.մ.մ./ինտերվալում, full scan ռեժիմում ոչ քիչ 97 սկան/վ: Հայտնաբերման սահմանը՝ ոչ ավել քան 5 ֆեմտոգրամ օկտաֆտորնաֆտալեն: Ազդակ/աղմուկ հարաբերությունը՝ ոչ քիչ քան 2000:1, ոչ ավել 1մկլ և ոչ ավել 1պիկոգրամ/միկրոլիտր խտությամբ օկտաֆտորնաֆտալեն: Վակուումային շյուզ, իոնային աղբյուրի քարտիջի արտահանման հնարավորությամբ, ինչպես նաև քրոմատոգրաֆիկ աշտարակի փոփոխման հնարավորությամբ առանց վակուում անջատելու: Գազային քրոմատագիր՝ երեք հեշտ փոփոխվող դետեկտորի տեղադրելու հնարավորություն, չորս դետեկտորի ազդանշանների գրանցման հնարավորություն, էլեկտրոնային պեմմատիկ կառավարում (էպի) բոլոր խորշիկների և դետեկտորների համար, նմուշի հետ հավող բոլոր մակերեսների իներտություն ամբողջ հոսքագծի երկայնքով, 4-ից ավելի էպի-ի տեղադրելու հնարավորություն և ոչ քիչ 14 ալիքի կառավարում, ճնշման սահմանված արժեք – ± 0.001 psi, բոլոր ճնշման տիրույթներով ներառված 0-150: Ներարկման համակարգը՝ մոդուլային, (split/splitless), գազ կրիչի բաժանիչով, հոսքի բաժանման գործակիցը ոչ պակաս քան 9999,9/1: Ճնշման տիրույթը՝ 0–970 կպա: Ընդհանուր հոսքերի տիրույթը ոչ նեղ քան 5 ից 1200մլ/րոպե, սանդղակավորումը 0,1մլ/րոպե: Ներարկման համակարգերի քամակը ոչ քիչ քան 2 համակարգ: Նախատեսված բոլոր մագանթային աշտարակների համար (50-ից 530

մկմ ներքին): Ներարկման համակարգի մաքսիմալ ջերմաստիճանը ոչ քիչ քան 400°C: Աշտարակի թերմոստատը՝ աշխատանքային ջերմաստիճանը +5-ից +450 °c, In2 սառեցումով +100 ից 450 °c, co2 սառեցումով +50 ից 450 °c: Պահման ժամանակի վերարտադրողականություն ոչ ավել քան - 0.008% կամ 0.0008 րոպե: Մակերեսի վերարտադրողականություն - < 0,5%rsd: Ջերմաստիճանի կարգավորելու ճշտությունը ոչ ավել քան-0.1 °c: Աջակցում է ոչ քիչ քան 25 տաքացման ծրագիր, ոչ քիչ քան 26 իզոթերմիկ տիրույթներում: թույլատրելի են բացասական արժեքներ: Բացասական նշանակությունները թույլատրելի են: Ջեռոցի ջերմաստիճանի աճի առավելագույն առժեքը +125 °c/րոպե: Առավելագույն անդադարտ աշխատանքի ժամանակը 999.99 րոպե (կամ 16.7 ժամ): Ջեռոցի սառեցման ժամանակը – ոչ քիչ քան 4 րոպեում 450°C-ից մինչև 50°C սառելու համար: Ներկառուցված հեղուկ բյուրեղային էկրան կառվարման հնարավորությամբ: Ավտոմատացված ներարկման համակարգ: Ներարկչի ծավալը ոչ ավել քան 10մկ, 5 և 0.5մկլ հնարավորությամբ: Մաքսիմալ ներարկման ծավալը ոչ քիչ քան 5մկլ: Մինիմալ ներարկման ծավալը ոչ ավել քան 0.01մկլ: Մնացորդային քանակը(carryover) ոչ ավել քան 0.001 %: Սանդղակավորումը ոչ ավել քան 0.01մկլ: Նմուշների սրվակները ոչ քիչ քան 8 հատ 2մլ: Ամբողջական ծրագրային կառավարմամբ: Ծրագրային կառավարումը համակարգը պետք է կառավարվի մեկ ծրագրային փաթեթով: Ծրագիրը պետք է համապատասխանի 21 cfr part 11 պահանջներին, օգտատերերի կառվարման համակարգ: Ավտոմատացված տվյալների դուրս բերման հնարավորություն: Մասս սպեկտրերի գրադարան պարունակությունը ոչ քիչ քան 300 000 սպեկտոր: Մասս սպեկտրների գրադարան սպեցիֆիկ թունաբանական հետազոտությունների համար ոչ քիչ քան 26000 սպեկտոր: Մասս սպեկտրների դեկոնվոլյուցիայի սպեցիֆիկ ծրագրի առկայություն: Ոչ քիչ քան core i5 կամ համարժեք համակարգչի առկայություն: Սարքի կարգաբերումը և թողարկումը պետք է կատարվի արտադրողի սերտիֆիկացված մասնագետի կողմից: Սինթետիկ, կիսասինթետիկ, բուսական ծագման թմրանյութերի, հոգեներգործուն նյութերի որոշման մեթոդների ներդրում ներառյալ 30մx0.25մմ ոչ բևեռային պոլիսիլոբքսանային աշտարակի տեղադրումը: Մատակարարը տրամադրում է անհրաժեշտ հելիում գազը ոչ պակաս քան 50լ մետաղական բալոնով 200 բար ճնշումով, 99,9999% մաքրությամբ: Երաշխիքային ժամկետ ոչ պակաս քան 1 տարի սարքի տեղադրման, կարգաբերման և թողարկման պահից:»:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները պետք է հնարավորություն տան մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման

առարկան, ապահովեն մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները չեն ապահովում մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը, սահմանափակում են ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը, հիմնված չեն

գնման գործընթացի մրցակցային, համաչափ, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, որն էլ առաջացրել է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների:

Այսպես՝ Պատվիրատուի կողմից տրված պարզաբանմամբ նշվել է, որ «Գազի քրոմատոգրի մաս սպեկտրաչափի համալրող մասերի և ծրագրերի հավաքածու» չափորոշիչները համապատասխանում են առնվազն 2 արտադրողների՝ SHIMADZU ընկերության GCMS QP2020NX և Thermo Fisher Scientific ընկերության ISQ 7000 Single quadrupole ժամանակակից սարքավորումների բնութագրերին:

Armeeps.am/PPCM/ կայքում առկա տվյալների համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել 2 կազմակերպություններ՝ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն՝ առաջարկելով Thermo Scientific ընկերության արտադրության GCMS ISQ7000 մոդելի ապրանքատեսակը, և «Պրոֆտեստ» ՍՊԸ-ն՝ առաջարկելով GIBNIK ընկերության կողմից արտադրված սարքավորում:

Ընկերության կողմից գործի քննության ընթացքում Բողոքներ քննող անձին ներկայացվեցին համապատասխան ապացույցներ, առ այն, որ Պատվիրատուի կողմից տրված պարզաբանմամբ նշված «Գազի քրոմատոգրի մաս սպեկտրաչափի համալրող մասերի և ծրագրերի հավաքածու» չափորոշիչների համապատասխանող առնվազն 2 արտադրողներից՝ SHIMADZU ընկերության GCMS QP2020NX սարքավորումը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պայմաններին և պահանջներին:

Ինչ վերաբերում է «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված GIBNIK արտադրող ընկերության սարքավորման «Գազի քրոմատոգրի մաս սպեկտրաչափի համալրող մասերի և ծրագրերի հավաքածու» չափորոշիչների համապատասխանությանը, ապա Ընկերության կողմից գործի քննության ընթացքում Բողոքներ քննող անձին ներկայացվեցին համապատասխան ապացույցներ, առ այն, որ GIBNIK արտադրող ընկերության սարքավորումները նույնպես չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պայմաններին և պահանջներին:

Ավելին՝ «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից Բողոքներ քննող անձի հարցմանն ի պատասխան, չներկայացվեցին համապատասխան ապացույցներ՝ վերջինիս կողմից առաջարկված GIBNIK ընկերության սարքավորման՝ «Գազի քրոմատոգրի մաս

սպեկտրաչափի համալրող մասերի և ծրագրերի հավաքածու» չափորոշիչների համապատասխանության վերաբերյալ:

Պատվիրատուի կողմից գործի քննության ժամանակ չներկայացվեցին համապատասխան ապացույցներ առ այն, թե վերջինիս կողմից տրված պարզաբանմամբ նշված «Գազի քրոմատոգրի մաս սպեկտրաչափի համալրող մասերի և ծրագրերի հավաքածու» չափորոշիչներին, բացի 2 արտադրողների՝ SHIMADZU ընկերության GCMS QP2020NX և Thermo Fisher Scientific ընկերության ISQ 7000 Single quadrupole սարքավորումներից, այլ որ ընկերությունների արտադրված սարքավորումներն են համապատասխանում Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պայմաններին և պահանջներին: Այն դեպքում, երբ Պարզաբանմամբ նշվել էր այլ ընկերությունների ենթադրյալ առկայության հանգամանքը:

Վերոնշյալներով պայմանավորված, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից «դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «գազային քրոմատոգրամասսպեկտոմետրի» ձեռքբերման նպատակով 18.10.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պայմանները և պահանջները վերաբերում են միայն Thermo Fisher Scientific ընկերության ISQ 7000 Single quadrupole սարքավորումանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները հիմնավոր են, իսկ գնման ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներն անհիմն են և սահմանափակում են հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքները:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում ընթացակարգը պետք է հայտարարել չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 24.10.2019թ. ներկայացված թիվ ԳԲԲԱ-ԼՕ-2019/76 ծածկագրով բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝**



ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ